600.0300.25.07.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

25 հուլիսի 2018 թվականի №300Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի №5Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ԱՐԵՎ ԵՎ ՋՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2018 թվականի հուլիսի 2-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի հունվարի 22-ի «ԱՐԵՎ ԵՎ ՋՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Քաջարանց» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №5Ա՝

   1) որոշումից հանել «գյուղական» բառը.

   2) որոշման 2-րդ կետով հաստատված՝ «ԱՐԵՎ ԵՎ ՋՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Քաջարանց» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0532 լիցենզիայի պայմանների՝

   ա. 3-րդ կետի 1-ին ենթակետում «մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերը փոխարինել «մինչև 2018 թվականի հուլիսի 26-ը» բառերով.

բ. 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Լիցենզիայով սահմանված ժամկետում կառուցել 3081 կՎտ հաշվարկային հզորությամբ «Քաջարանց» փոքր հիդրոէլեկտրակայանը, արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) ու այն վաճառել Շուկայի կանոններով:».

գ. 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. «Քաջարանց» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 3246 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով՝

1) հիդրոտուրբին №1՝ TP-V-949-090-5, 3399 կՎտ, 2018թ.,
2) գեներատոր №1՝ SHE 800 M10, 3246 կՎտ, 2017թ.:»:

2. «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2017 թվականի փետրվարի 2-ի №652-827 գրությամբ ներկայացված №ԱԲԵՆ17/07-08 երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև ստանձնած յոթ միլիոն յոթ հարյուր երկու հազար հինգ հարյուր դրամ երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հուլիսի 26-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ **Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ**

ք. Երևան
25 հուլիսի 2018թ.